

ցանեւ զայն տեղին, եւ զբան նորովից. բայց բարում ահ, եւ երկիւղ կրեցեալ լինէր, մինչեւ որ աւարտէր:

Վասն երրորդին:

Որ այն երեք ազգք ոչ են դաւանակիցք, եւ ոչ ունին ընդ հայոց հաղորդակցութիւնս ի յաստուածայինս: Բայց զի հայք ընդունին զնոսա ինքեանց որպէս թէ կցորդ եւ հետեւօրս իւրեանց, եւ կոչելով զնոսա այսու կոչմամբ իբրեւ եամախս, այսինքն երկրորդս ինքեանց: Այլ մէք ոչ գիտեմք, թէ առ ինչ վաղճան: Եւ պատրիարգն Երուսաղեմի թէոզորոս եպիսկոպոս հայոց՝ ձեռնադրեաց զմի օմն ի նոցանէ քահանայ, որ ի յազգէն Ասորոց. որ այս ստոյգ է: Այլ ի վերայ այսր գործողութեանս ոչ սակաւ շփոթութիւնս եղեալ ընդ ազգին այնմիկ, այսինքն ընդ ասորոց:

Վասն չորրորդին:

Որ վասն օձնեցւոյն: Քանզի յառաջագոյն լուեալ մեր ի ծերունեաց, որ ուղղափառ հայոց ի յանուանէ եւ ի համբաւոյ նորա խրատեալ լինէին: Բայց այժմն լսեմք եւ տեսանեմք, որ ի յոմանց յարգի եւ մեծարի: Այլ զի օհան անուամբ կան քանիք, որք եղեալք են յառաջագոյն, զորոց բանք եւ պատմութիւնք ընդ իրեարս խառնին, որք մնան անորոշ: Նմանապէս բանք եւ պատմութիւնք ընդ իրեարս խառնին վասն ներսէս անուամբ եղելոցն այնպէս մնան անորոշ, որպէս Յոհաննէս, զոր ասացաք ի վերոյ:

Վասն հինգերորդին:

Ոչ երբէք լուեալ, եթէ որոտնեցին շատադով եղեալ ժողովոյն քաղկեդոնի. որ զայս եւս